

որ Շ. Շահամիրյանը «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ի մի քանի օրինակ, իր այլ հրատարակութիւնների հետ միասին, նոր Զուղայի վրայով ուղարկել է Անդրկովկաս՝ Էջմիածնի կաթողիկոսին, Ղարաբաղի մելիքներին և Հերակլ II թագավորին: Նոր Զուղայի հայոց հոգևոր առաջնորդ Մկրտիչ վարդապետին Ղուկաս Կարնեցու գրած մի նամակից (հուլիս 1786 թ.) երևում է, որ քարտեզները պարունակող ծանրոցը ճանապարհին բավականին ուշացել է և անհաս-գրատացած կաթողիկոսը այդ մասին հարցում է արել վարդապետին¹²: Քարտեզների ու մյուս իրերի ուշացման մասին Ղուկաս Կարնեցին իրազեկ է պահել Հերակլ թագավորին (ապրիլ, 1786 թ.)¹³ և մելիք Ավետիքին (27 նոյեմբերի 1786 թ.)¹⁴: 1787 թ. ապրիլի 17-ին այդ ծանրոցը բերվում է Էջմիածին: Շ. Շահամիրյանին հասցեագրված Ղուկաս Կարնեցու նամակներից մեկի սևագրութիւն մեջ «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ի մասին կարգում ենք հետևյալը. «զՎրաց Արքայի և Մելիք Աւետիքի բաժինն առ ինքեանս չղեցաք և զմերն կախեալ վայելեմք, վասն որոյ շնորհակալեցաք զսիրելւոյդ և օրհնութեամբ բազմա օրհնեցաք զբեզ»¹⁵: Նրա մի այլ նամակից (30 դեկտեմբերի 1787 թ.) տեղեկանում ենք, որ մելիք Հովսեփին հասցեագրված իրերն ու քարտեզը հնարավոր չի լինում անմիջապես ուղարկել՝ «վասն ժամանակի վտանդիցն, զի յետոյ չղեցուք»¹⁶: Այդ օրերին, սակայն, մելիք Հովսեփը կենդանի չէր, և նվերները նույն թվականի նոյեմբերի 3-ին, Թիֆլիսից այդ նպատակով եկած մի անձնավորութիւնի միջոցով, ուղարկվում է մելիք Արսլանին¹⁷:

Ինչպես տեսնում ենք, Շ. Շահամիրյանը իր «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ը կարողացել է ուղարկել այն անձանց, ում հետ մագրասցիները մեծ հույսեր էին կապել հայրենիքի ազատագրման իրենց ծրագրերում:

«Աշխարհացոյց Հայաստանեայց»-ի Մոսկվայում պահվող օրինակի ու նրա պատճենի վրա արված գրութիւնները հնարավորութիւն են ընձեռում իմանալ, թե ի՞նչ եղանակով են նրանք ընկել ուսանական արխիվը, ո՞վ է եղել պատճենահանողը և քարտեզի վրա ուսերեն բառեր ավելացնողը¹⁸:

Պատճենը, որ կատարված է ձեռքով վերոհիշյալ քարտեզից և որի վրա աշխարհագրական անունները բերված են միայն ուսերեն (իսկ մի քանի անուններ նաև պարսկերեն), վերին մասում ունի հետևյալ ուսերեն գրութիւնը. «Համայն Թուսիո ինքնակալ, մեծ միապետ և կայսր Ալեքսանդր Առաջինին՝ ի շնորհավորումն այս նորեկ՝ 1816 թվականի: Ամենախոնարհ նվեր զարաբաղցի հայ ազնվական Ավետ Մակարի Մակարովից», իսկ ներքևում՝ «Մի շարք հայտնի վայրերի հայերեն ու պարսկերեն հավելումով նկարված ու հայերենից ուսերենի է թարգմանված վերոգրյալ նվիրաբերող զարաբաղցի հայ ազնվական Ավետ Մ. Մամիկոնովի կողմից՝ Ս. Պետերբուրգում, 1816 թ. հունվարի 1-ին»: Նույն անձնավորութիւնի կողմից, որը հայերեն ստորագրում է

12 Հայկական ՍՍԽ Պետական Մատենադարան, ձեռ. 4481, էջ 81բ:

13 Նույն տեղում, էջ 73ա:

14 Նույն տեղում, էջ 191բ:

15 Նույն տեղում, էջ 163բ—164ա:

16 Նույն տեղում, էջ 124ա—124բ:

17 Նույն տեղում, էջ 170բ—171ա:

18 Ա. Գ. Հովհաննիսյանի ենթադրությամբ ուսանական արտաքին գործերի մինիստրութիւնի արխիվի «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ը մնացել է Շ. Շահամիրյանի որդի նղբազար Շահամիրյանի Պետերբուրգ կատարած այցելութիւնի ժամանակներից («Նորք», 1922, զիբբ առաջին, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 161):